ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-318-14.10.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1630 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

(Պ-318-14.10.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ հսկիչ դրամարկղային մեքենայի (այսուհետ՝ ՀԴՄ) աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և տեղեկացնել իրավասու ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձը հայտը ստանալուց հետո՝ առավելագույնը երեք ժամվա ընթացքում, տեխնիկական սպասարկում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը տեղեկացնում է ՀԴՄ-ի անսարքության մասին: Նշյալ սուբյեկտները դիմումատուի հայտի հիման վրա, իրավասու ղեկավար անձի կողմից ՀԴՄ-ի անսարքության մասին տեղեկանալուց հետո՝ առավելագույնը 24 ժամվա ընթացքում, ստուգում են անսարք ՀԴՄ-ն և անհրաժեշտության դեպքում կազմում են անսարք լինելու մասին ակտ: Վերանորոգման աշխատանքների ողջ ընթացքում սպասարկում իրականացնող սուբյեկտը ՀԴՄ կիրառողի պահանջով տվյալ աշխատանքային օրվա ընթացքում ժամանակավոր օգտագործման համար վերջինիս տրամադրում է ՀԴՄ սարք: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ առաջարկությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ գործնականում տնտեսավարող սուբյեկտները հաճախ ՀԴՄ-ների տեխնիկական անսարքության հետևանքով խնդիրներ են ունենում, իսկ գործող օրենսդրությունը հստակ չի սահմանում անսարքության պատճառով տվյալ ժամանակահատվածում շահագործվող ՀԴՄ-ների վերանորոգման կամ նոր ՀԴՄ-ների տրամադրման հստակ ժամկետներ:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀԴՄ-ների կիրառության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն որոշմամբ, որի 1-ին կետով հաստատված N 3 հավելվածի՝

1) 15-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իր ղեկավար անձին, որը սպասարկման կենտրոնին տեղեկացնում է ՀԴՄ-ի անսարքության մասին: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է.

2) 16-րդ կետի համաձայն՝ սպասարկման կենտրոնը ստուգում է անսարք ՀԴՄ-ն և անհրաժեշտության դեպքում ՀԴՄ կիրառող կազմակերպության ղեկավարի կամ պատասխանատու անձի հետ կազմում է ՀԴՄ-ն անսարք լինելու վերաբերյալ ակտ: ՀԴՄ կիրառողի պահանջով սպասարկման կենտրոնը ՀԴՄ-ի վերանորոգման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ՀԴՄ կիրառողին տրամադրում է ժամանակավոր օգտագործման ՀԴՄ:

Այսինքն, նախագծով, ըստ էության, առաջարկվում է վերոնշյալ որոշմամբ սահմանված կարգավորումները սահմանել ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ միաժամանակ կիրառելով որոշ ժամանակային սահմանափակումներ: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ՝

1) ղեկավար անձը ՀԴՄ-ի անսարքության մասին ՀԴՄ-ների սպասարկում և նորոգում իրականացնող ընկերությանը տեղեկացնում է երեք ժամվա ընթացքում.

2) ՀԴՄ-ների սպասարկում և նորոգում իրականացնող ընկերությունը անսարք ՀԴՄ-ն ստուգում է անսարքության մասին տեղեկանալուց հետո առավելագույնը 24 ժամվա ընթացքում.

3) ՀԴՄ-ների սպասարկում և նորոգում իրականացնող ընկերությունը ժամանակավոր օգտագործման համար ՀԴՄ-ն տրամադրում է տվյալ աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն առաջանալիս դրա մասին տեղեկացնելու, ՀԴՄ-ն փոխարինելու և վերա-

նորոգելու հետ կապված հարաբերությունների շրջանակներում ժամանակային սահմանափակումներ կիրառելու առաջարկության վերաբերյալ սկզբունքային առարկություններ չկան:

Միաժամանակ, հայտնում ենք, որ վերոնշյալ հարաբերությունները Օրենսգրքով կարգավորելը նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ՀԴՄ-ին և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, ՀԴՄ-ն հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, ՀԴՄ-ի կիրառության կանոնները հաստատում է ՀՀ կառավարությունը: Բացի այդ, գտնում ենք, որ Օրենսգրքով պետք է սահմանվեն հարաբերությունները կարգավորող հիմնական դրույթները, իսկ ընթացակարգային հարցերը պետք է կարգավորվեն ենթաօրենսդրական ակտերով, հակառակ պարագայում կստացվի այնպես, որ ՀՀ կառավարության որոշումներով կարգավորված հարաբերությունների մեծ մասը պետք է սահմանվի Օրենսգրքով, ինչը ակնհայտ է, որ բացատրություն չունի:

Հայտնում ենք նաև, որ ս. թ. մարտի 29-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ նախատեսող որոշումներ, որոնցով ազատականացվել են ՀԴՄ-ների ներմուծման, իրացման ու տեխնիկական սպասարկման ընթացակարգերը: Արդյունքում ՀԴՄ-ներ ներմուծելու, իրացնելու ու տեխնիկական սպասարկում իրականացնելու գործառույթները հիմնականում վերապահվել են տնտեսավարող սուբյեկտներին: Հետևաբար, առաջարկությունը անհրաժեշտ է դիտարկել ՀԴՄ-ների տեխնիկական սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կարողությունների տեսանկյունից: Այս առումով, հայտնում ենք, որ առաջարկությունն անհրաժեշտ է քննարկել վերջիններիս հետ: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտները կարող են 24 ժամվա ընթացքում իրականացնել ՀԴՄ-ի ստուգում՝ հաշվի առնելով այն, որ խոսքը վերաբերում է նաև հեռավոր գյուղերում գտնվող ՀԴՄ-ների սպասարկմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ նախագծի ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար:

Բացի այդ, նախագծի 1-ին հոդվածում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով, իսկ «նոր» բառից հետո լրացնել «7.1» թվերով՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 33-րդ և 14-րդ հոդվածներից:

Նախագծի 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «այնուհետև հաջորդող» և «հետո եկող վերջակետի փոխարեն դնել ստորակետ» բառերը՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2019 թվականի N 1630 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-318-14.10.2019-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 7
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-318-14.10.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 381-րդ հոդվածի 6-րդ կետից հետո ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ:

«7. ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և տեղեկացնել իրավասու՝ ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձը հայտը ստանալուց հետո առավելագույնը երեք ժամվա ընթացքում տեխնիկական սպասարկում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետև սպասարկման կենտրոն) տեղեկացնում է ՀԴՄ-ի անսարքության մասին: Սպասարկման կենտրոնը դիմումատուի հայտի հիման վրա, իրավասու ղեկավար անձի կողմից ՀԴՄ-ի անսարքության մասին տեղեկանալուց հետո, առավելագույնը 24 ժամվա ընթացքում, ստուգում է անսարք ՀԴՄ-ն և անհրաժեշտության դեպքում կազմում անսարք լինելու մասին ակտ: Վերանորոգման աշխատանքների ողջ ընթացքում սպասարկման կենտրոնը, ՀԴՄ կիրառողի պահանջով՝ տվյալ աշխատանքային օրվա ընթացքում, ժամանակավոր օգտագործման համար վերջինիս տրամադրում է ՀԴՄ սարք: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է»:

Այնուհետև հաջորդող 8-րդ կետում վերջին բառից հետո եկող վերջակետի փոխարեն դնել ստորակետ և լրացնել հետևյալ բառերով:

«Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատում է Կառավարությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքում» լրացում կատարելու նախագծի վերաբերյալ

Գործնականում տնտեսավարող սուբյեկտները հաճախ ՀԴՄ-ների տեխնիկական անսարքության հետևանքով լուրջ խնդիրներ են ունենում, իսկ գործող օրենսդրությունը հստակ չի սահմանում անսարքության պատճառով տվյալ ժամանակահատվածում շահագործվող ՀԴՄ-ների վերանորոգման կամ նոր ՀԴՄ-ների տրամադրման հստակ ժամկետներ: Նշենք նաև, որ 2013թ. օգոստոսի 1-ին ՀՀ կառավարության N 846-Ն որոշմամբ սահմանված հաշվիչ-դրամարկղային մեքենաների կիրառման հետ կապված Կարգը ևս չի սահմանում խափանված ՀԴՄ-ների նորոգման կամ նոր ՀԴՄ-ներով փոխարինման հստակ ժամկետներ:

Առաջարկվող նախագիծը քննարկվող խնդրին տալիս է օրենսդրական լուծում:

Համոզված ենք, որ օրենսդրական նախաձեռնությունը կնպաստի առկա խնդրի կարգավորմանը: